

ԻՆԳԱ ՄԱՐՏԻՆՅԱՆ

ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի
տեսուչյան և պատմության ամբիոնի ասպիրանտ

ՔՐԵԱԿԱՆ «ՔՐՈՆԻԿՈՆՆԸ» ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

«Քրեական «քրոնիկոնը» և իրավական գնահատականների խնդիրը համացանցային լրատվամիջոցներում» հոդվածում անդրադարձել ենք համացանցային լրատվամիջոցների լրահոսի կարևորագույն մաս կազմող «կրիմինալ» պատմություններին, որոնք մեծ ռեյտինգ են բերում կայքերին: Սակայն հաճախ դժբախտ դեպքերի լուսաբանման պատմությունները ուղեկցվում են իրավական անգրագետ տերմինոլոգիայով, անհարկի որակումներով, անմեղության կանխավարկածի խախտմամբ, ինչը երաշխավորված է թե ՀՀ, թե միջազգային օրենսդրությամբ: Ներկայացնում ենք օրինակներ թե հայկական, թե միջազգային իրականությունից, ինչպես նաև ՀՀ-ում անմեղության կանխավարկածի խախտման վերաբերյալ արձանագրված դատական նախադեպը:

Հիմնաբառեր- քրեական պատմություններ, ռեյտինգ, իրավական անգրագետ տերմինալոգիա, անմեղության կանխավարկած, դատական նախադեպ, ահաբեկչություն, ՀՀ սահմանադրություն, Քրեական դատավարության օրենսգիրք, Եվրոպական կոնվենցիա, մասնագիտացած լրագրողներ:

Քրեական պատմությունները կամ առհասարակ «կրիմինալը», դժբախտ, դաժան դեպքերը, համացանցային լրատվամիջոցների համար արագ և շատ ընթերցող հավաքելու աղբյուր են՝ այսինքն ռեյտինգային:

Լրատվական քրոնիկոնն ամենապահանջված տեղեկատվությունն է եղել տարիներ շարունակ, իսկ համացանցի լայն կիրառումը ոչ միայն չնվազեցրեց ընթերցողի հետաքրքրությունը, այլև ստեղծվեց դեպքի վայրից ուղիղ կապով տեղեկատվություն տալու նոր մշակույթ:

Ամենօրյա մոնիթորինգը համացանցային լրատվամիջոցների շրջանում ցույց է տալիս, որ թոփ լուրերի սանդղակում սովորաբար հայտնվում են նման բովանդակությամբ լուրեր՝ զինվոր է զոհվել, կամրջից աղջիկ է նետվել, փեսան դաժանորեն սպանել է գոբանչին, եղբայրը քրոջը գտել է կախված վիճակում և այդպես շարունակ:

Այս լուրերը ամենևին էլ մտքի աշխատանք, վերլուծություն չեն պահանջում և ընթերցվելուց կարճ ժամանակ անց էլ մոռացվում են, քանի որ հերթական պատահարն է իր մասին հիշեցնում և կրկին դիտումներ ապահովում ընթերցողի հետաքրքրասիրության, նյարդերի հաշվին: Դրանցով լսարան ապահովող լրատվամիջոցների խմբագիրները և լրագրողները որպես «արդարացում» հաճախ նշում են, որ եթե անգամ իրենք նման ինֆորմացիա չտան, մրցակից լրատվամիջոցը կհաղորդի, և այդ դեպքում իրենք միայն կտուժեն: Իհարկե, կան լրատվամիջոցներ, ովքեր խուսափում են, կամ հնարավորինս քիչ են հրապարակում «կրիմինալ» նյութեր, բայց խոստովանում են՝ դա ի հաշիվ ըն-

թերցողի է: Նման լրատվամիջոցները կարողացել են սովորեցնել ընթերցողին իր մոտ նման «քրեական խրոնիկոն» չփնտրել՝ այսպիսով ունենալով քիչ, բայց «պատրաստված, ինտելեկտուալ» լսարան: Հրաժարվել նման ինֆորմացիաներից ոչ բոլոր լրատվամիջոցներն են կարող, բայց կարելի է և պետք է այս ամենը «մատուցել» գրագետ՝ առանց որևէ մեկի իրավունքը խախտելու, ցավ պատճառելու: Մեր ուսումնասիրությունը ցույց է տվել, որ համացանցային լրատվամիջոցներում քրեական պատմությունների, դժբախտ դեպքերի լուսաբանումը վերածվում է սերիալի, մեկ, երկու նյութին հաջորդում են արդեն մյուս «սերիաները», հետևյալ վերտառություններով՝ ինչ են պատմում հարևանները, ինչ երազանքներ ունեն գինվորը, երբ է վերջին անգամ խոսել ծնողների հետ և այլն:

Հաճախ դժբախտ դեպքերի լուսաբանման պատմությունները ուղեկցվում են իրավական անգրագետ տերմինոլոգիայով, անհարկի որակումներով: Համացանցային լրատվամիջոցներում բազում նյութեր կարելի է գտնել, որտեղ հեղինակները գրում են մարդասպան, մայրասպան, հանցագործ, ավազակ, գող և այլն՝ խախտելով ամենակարևոր սկզբունքներից մեկը՝ անմեղության կանխավարկածը:

Իհարկե, անմեղության կանխավարկածը միայն լրագրողները չեն խախտում, հաճախ ենք տեսնում, թե ինչպես իրավապահ համակարգի բարձրաստիճան ներկայացուցիչը որակումներ է տալիս: Օրինակ՝ 2016թ հուլիսին, երբ «Սասնա ծռեր» խումբը գրավել էր ՊՊԾ գնդի շենքը, Հայաստանի իրավապահ համակարգում կոլապս էր, ձախ ձեռքը

չգիտեր, թե աջն ինչ է անում: Նախ, նախագահը ծռերի անդամներին անվանեց ահաբեկիչներ, երբ դեպքերը նոր են տեղի ունեցել, քննություն է, որևէ որոշում, վճիռ չկա: ԱԱԾ-ն առհասարակ չէր կողմնորոշվում ինչ աներ՝ ասել ահաբեկիչ, թե՛ ոչ, սկզբից հաղորդագրություններում նշվեց ահաբեկիչ, սակայն փաստաբանները, իրավաբանները հարց էին բարձրացնում՝ ինչպես է ԱԱԾ-ի նման կառույցը նման «կիքս» անում, որակում տալիս առանց վճռի, երբ անգամ գործը այդ հողվածով հարուցված չէ: Անգամ եթե գործը հարուցվեր ահաբեկչություն հողվածով, դա որևէ մեկին իրավունք չէր տալիս մարդկանց որակել ահաբեկիչ: Ուշագրավ է, որ նախկին գլխավոր դատախազը հեռուստաընկերությամբ խուսափեց «Սասնա ծռերի» անդամներին անվանել ահաբեկիչ: Իհարկե, հետո լուրեր տարածվեցին, որ հենց այդ զգուշավորությունը, օրենքը .հարգելն էլ պատճառներից մեկը եղավ նրա հեռացման:

Համենայն դեպս՝ անգամ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից անմեղության կանխավարկածը չհարգելը չի արդարացնում լրագրողներին իրենց հրապարակումներում նման սխալներ թույլ տալուց:

Անմեղության կանխավարկածը հարգելու առումով մենք դեռ շատ հեռու ենք քաղաքակիրթ աշխարհից և սովորելու բան ունենք: Օրինակ՝ BBC-ի կորպորացիոն ներքին կանոնադրությունն արգելում է իր եթերում ԻՊ-ի անդամներին անվանել «ահաբեկիչ»: Պատճառն այն է, որ այնպես չստացվի, թե լրատվամիջոցն իրեն դատավորի դեր է վերագրել, հատկապես, երբ «ահաբեկչությունը» դժվար գնահատելի և, մյուս կողմից, գնահատական պարունակող հասկացություն է: «Ահաբեկիչ» բնորոշման փոխարեն BBC-ն իր լրագրողներին կարգադրել է գործածել «զինյալ» բնորոշումը, իսկ կոնկրետ ու ակնհայտ գործողությունների դեպքում՝ «պայթյունն իրականացրածը», «հարձակում գործածը», «առևանգիչը» և այլն:

Ըստ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի² հանցագործության մեջ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի:

ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասը³ նույնպես երաշխավորում է անձի անմեղության սկզբունքի պաշտպանությունը, քանի դեռ չկա ուժի մեջ մտած դատավճիռ, որով ապացուցված կհամարվի նրա մեղավորությունը:

Համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի⁴ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքննության՝ խելամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից» (հոդված 6, մաս 1): Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործության մեջ, անմեղ է համարվում, մինչև որ նրա մեղավորությունը չապացուցվի օրենքին համապատասխան: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 1-ին մասով ևս հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվելու մինչև այն պահը, քանի դեռ նրա մեղքը օրինական կարգով չի հաստատվել հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները:

Անմեղության կանխավարկածի վերաբերյալ մեր ուսումնասիրած ժամանակահատվածում՝ 2010-2016թթ. ամենահայտնի դատական գործը Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Դուկասյանի փեսայի սպանության մեջ մեղադրվող Հարություն Սարգսյանի հայցն էր ընդդեմ Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Դուկասյանի և վերջինիս գրասենյակի հայցի: Գործով երրորդ անձ էին ներգրավված լրատվամիջոցների հիմնադիրներ «Պանորամա ԷյԷմ» ՍՊԸ-ն, «Առավոտ օրաթերթ» ՍՊԸ-ն և լրագրող Անժելա Թովմասյանը: Հիշեցնենք, որ հայցը վարույթ էր ընդունվել 2013թ. սեպտեմբերի 2-ին: Հայցվորը վիճարկում էր իր անմեղության կանխավարկածը խախտած ու դրանով իսկ իր պատիվն ու արժանապատվությունը վիրավորած տեղեկությունները, որոնք եղել են հիշյալ գրասենյակի տարածած հայտարարության մեջ և հրապարակվել են «Panorama.am», «Aravot.am», «Hayeli.am», ինչպես նաև՝ «Aysor.am» կայքերում: Հայցապահանջն էր՝ վերջին երեք կայքերի միջոցով հրապարակայնորեն ներողություն խնդրել: Դատարանը վճռել է Հարություն Սարգսյանի հայցն ընդդեմ Վարդան Դուկասյանի և Վարդան Դուկասյանի գրասենյակի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք՝ «Պանորամա ԷյԷմ», «Առավոտ օրաթերթ» ՍՊ ընկերությունների և Անժելա Թովմասյանի՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելու պահանջի մասին՝ մերժել: Փոխարենը Հարություն Սարգսյանի հայցն

ընդդեմ «Ցայգ» հեռուստաընկերության՝ բավարարվել է ամբողջությամբ: Հիշեցնենք. Հարություն Սարգսյանը 2013թ. հունվարի 23-ին հայցադիմում էր ներկայացրել՝ վիճարկելով «Ցայգի», «Ազդարար» լրատվական ծրագրի 2012թ. դեկտեմբերի 27-ի թողարկման ընթացքում ցուցադրված տեսանյութը, որտեղ հնչել է հետևյալ արտահայտությունը. «...Հարություն Սարգսյանը «Մայր Հայաստան» հուշահամալիրի տարածքում առանձնակի դաժանությամբ սպանել էր Գյումրու նախկին քաղաքապետի դստեր նշանած Կարեն Եսայանին...»: Ըստ հայցվորի՝ իրեն մարդասպան անվանելով, խախտվել է անմեղության կանխավարկածը և վիրավորանք հասցվել իր անձին, ուստի նա պահանջում է պարտավորեցնել պատասխանողին հրապարակայնորեն ներողություն խնդրել և վճարել 300 000 դրամ՝ որպես փոխհատուցում վիրավորանքի և զրպարտության համար: «Ցայգ» հեռուստաընկերությանը պարտավորվել է հրապարակայնորեն ներողություն խնդրել Հարություն Սամվելի Սարգսյանից՝ 2012թ. դեկտեմբերի 27-ին հրապարակված տեքստում վիրավորանք և զրպարտություն պարունակող, հայցվորի պատիվը և արժանապատվությունն արատավորող, անձի անմեղության կանխավարկածի խախտմամբ զուգորդված՝ «առանձնակի դաժանությամբ սպանել էր» արտահայտության համար: Վճռվել է նաև՝ «Ցայգ» հեռուստաընկերությունից հօգուտ Հարություն Սարգսյանի բռնագանձել 300 հազար դրամ, որից 100 հազար դրամը՝ որպես վիրավորանք հասցնելու, իսկ 200 հազար դրամը՝ որպես զրպարտելու հետևանքով հայցվորին պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Անմեղության կանխավարկածից զատ՝ համացանցային լրատվամիջոցներում իրավական տերմինների բազմաթիվ սխալ կիրառման դեպքեր կան: Ամենից տարածված սխալները փորձել ենք առանձնացնել: Օրինակ՝ հաճախ լրագրողները չեն տարբերում քաղաքացիական հայցը և դատարանը քրեական գործից, վճիռը՝ դատավճռից, դատական ատյանների առանձնացումը՝ առաջին ատյան, վերաքննիչ, վճռաբեկ, ՄԻԵԴ, ձերբակալումը՝ կալանավորումից, առհասարակ խափանման միջոց ասվածը, իրավաբանի, փաստաբանի, հանրային պաշտպանի տարբերությունը, կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դատապարատյալ տարբերակումները և այլն: Մեր կարծիքով՝ խնդրի պատճառն այն է, որ առցանց մամուլում մեծամասամբ չկան իրավական թեմաներով մասնագիտացած, այդ ուղղությամբ գրող լրագրողները, այսօր այս դատական գործը կարող է մի լրագրող լուսաբանել, վաղը՝ մեկ ուրիշը՝ հաճախ անտեղյակ լինելով գործի նախապատմությանը: Իրավական տեր-

մինների սխալ կիրառման պատճառներից է նաև այն, որ հիմնականում առցանց մամուլը, ունենալով օպերատիվության, նյութը առաջինը հաղորդելու խնդիր, ուշադրություն չի դարձնում նման կարևոր «մանրությունների» վրա, ինչն էլ հանգեցնում է իրավական անգրագիտության: Խնդրի լուծման ուղիներից մեկը՝ կարծում ենք այն է, որ այդ ոլորտը լուսաբանող լրագրողները լինեն պատրաստված, կարդան օրենքները, իմանան դատական ատյանները՝ լիազորություններով և գործառույթներով, մասնակցեն թրեյնինգների, սեմինարների, որոնք հաճախ կազմակերպում են: Իսկ որևէ տերմին չիմանալու կամ կասկածելու դեպքում կարելի է պարզապես դիմել որևէ իրավաբանի: Քրեական պատմությունները, դատական գործերը կարևոր մաս են կազմում համացանցային լրատվամիջոցների լրահոսի մեջ, ուստի այն պետք է լուսաբանեն լրջորեն՝ առանց նման տարրական սխալների: Գրագետ ընթերցողը, որքան էլ գնահատի նյութը առաջինը հրապարակելու, օպերատիվ լինելու հանգամանքը, կարող է հիասթափվել՝ տեսնելով հրապարակման մեջ բազմաթիվ սխալներ:

www.journal.lawinstitute.am

¹ <http://www.dailymail.co.uk/news/article-3346760/Fury-BBC-refuses-call-ISIS-killers-terrorists.html>

² <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1>

³ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=90977>

⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=20870>

⁵ Մանրամասները ԽԱՊԿ 2013, 2014 և 2015թ. տարեկան զեկույցներում, տե՛ս, www.khosq.am կայքի «Զեկույցներ» բաժնում:

Инга Мартинян

аспирант кафедры теории и истории прессы
факультета журналистики ЕГУ

РЕЗЮМЕ

Уголовный “хроникон” и проблема правовых оценок в армянских СМИ

В статье затронуты “криминальные” истории, являющиеся важной частью ленты онлайн-СМИ и обеспечивающие высокие рейтинги сайтам. Однако часто истории освещения несчастных случаев сопровождаются безграмотной правовой терминологией, неуместными характеристиками и нарушением презумпции невиновности, которая гарантирована как армянским, так и международным законодательством. Автор представляет примеры как из армянских, так и мировых реалий, а также судебный прецедент связанный с нарушением в РА презумпции невиновности.

Ключевые слова: криминальные истории, рейтинг, юридическая невежественная терминология, презумпция невиновности, судебный прецедент, терроризм, Конституция Республики Армения, Уголовно-процессуальный кодекс, Европейская конвенция, специализированные журналисты.

Inga Martinyan

YSU Faculty of Journalism, Chair of Media Theory and History
Post-graduate student

SUMMARY

The Criminal Chronicle and the Issue of Legal Approaches in the Internet Mass Media

In the article «The criminal chronicle and the issue of legal approaches in the internet mass media», we have referred to the criminal stories, that are the most important part of the news media coverage that bring a great rating to websites. However, stories of ill-fated cases are often accompanied by legal illiterate terminology, unnecessary qualifications, and violation of presumption of innocence, which is guaranteed both by RA and international law. We present examples of both the Armenian and international reality as well as the judicial precedent on the violation of the presumption of innocence in Armenia.

Keywords: criminal histories, rating, legal ignorant terminology, presumption of innocence, trial precedent, terrorism, constitution of the Republic of Armenia, Criminal Procedure Code, European Convention, specialized journalists.